ՄԿՐՏԻՉ ՄԿՐՅԱՆ

Հայագիտության մի շարք բնագավառներում զգալի ավանդ ունի ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆ. Մկրտիչ Մկրյանը: Աշակերտելով անվանի հայագետներ Մ. Աբեղյանին, Ա. Տերտերյանին և ուրիշների, նա իր բազմաթիվ աշխատություններով հարստացրել է հայագիտության պատմությունը:

Անուրանալի է նրա մեծ երախտիքը մասնավորապես հայ բազմադարյան գրականության պատմության ուսումնասիրության ասպարեզում: Գիտական բազմամյա գործունեության ընթացքում նրա ուշադրությանն են արժանացել գրականության անցած ճանապարհի օրինաչափությունները, պատմությունն իրենց ուսերին տանող վիթխարի անհատականությունները՝ Խորենացուց մինչև Նարեկացի, Աբովյանից մինչև Թումանյան, Իսահակյանից մինչև Չարենց:

Հին գրականության պատմությանը նվիրված հետազոտություններում Մկրտիչ Մկրյանը վերանայեց որոշ հայացքներ, առաջադրեց հին գրականության պատմության գիտական նոր պարբերացում, նորովի մեկնաբանեց նրա մի շարք խոշորագույն ներկայացուցիչներին:

Ավելի քան չորս տասնամյակների ընթացքում Մկրյանը հրատարակել է մի շարք մենագրություններ ու ժողովածուներ («Մովսես Խորենացի. կյանքն ու ստեղծագործությունը», «Գրիգոր Նարեկացի», «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն», «Հայ հին գրականության պատմություն (V—X դարեր)»), տպագրել բազմաթիվ հոդվածներ, որոնցում գիտական համոզչականությամբ մշակել է հին գրականության պարբերացումը, նորովի իմաստավորել պատմաշրջանների բնույթն ու բովանդակությունը, խոշորագույն ներկայացուցիչների ժառանգությունը: Մկրյանը առաջադրում է հետևյալ շրջաբաժանումը՝ «Հայ գրականությունը V դարում», այնուհետև՝ «IV—IX դարերում», «X դարում», «XI—XII դարերում», «XIII—XVI դարերում», «XVII—XVIII դարերում»: Այնպիսի մի բարդ խնդիր, ինչպիսին գրականության պատմության պարբերացումն է, կարող է վեճեր հարուցել և թերևս Մկրտիչ Մկրյանն էլ ունենա ընդդիմախոսներ կամ լրացնողներ: Մի բան, սակայն, անտարակույս է՝ գիտնականը ելնում է գրականագիտության ու գրականության պատմագրության արդի փորձից ու մակարդակից և բավարարում է ժամանակակից գիտության պահանջները: Գիտական համոզչականությամբ ու տրամաբանության ուժով նա բացահայտում է յուրաքանչյուր պատմաշրջանի սոցիալ-քաղաքական ու գեղարվեստական բովանդակությունը, հայտնաբերում ներքին աղերսներն ու պատմական հաջորդականությունը, տարբերություններն ու ինքնատիպ գծերը:

Հատուկ ուշադրության է արժանի մասնավորապես V դարի առանձնացումը իբրև ինքնուրույն շրջանի: «...Հինգերորդ դարի գրականությունը իբրև առանձին մաս բաժանված է վեցից իններորդ դարերի գրականության շրջանից: Բանն այն է,— գրում է Մկրյանը,— որ մեր կարծիքով հինգերորդ դարի

հայ գրականությունը հիմնականում աշխարհիկ-քաղաքական (և ոչ եկեղեցական-քաղաքական) պայքարի գրականություն էր, որը ներկայացրել են մեր դասական պատմիչները՝ Փավստոսը, Խորենացին, Եղիշեն ու Փարպեցին, որոնք էլ իրենց գործերի գիտական ու գրական արժանիքներով մնացին անկրկնելի ամբողջ միջնադարի ընթացքում» («Հայ հին գրականության պատմություն» (V—X դարեր), էջ 7): Բնութագրելով պատմագեղարվեստական գրականության ծագման նախադրյալները, ինքնատիպ ու տարբերիչ գծերը, դարաշրջանի հասարակական-քաղաքական կյանքը, այնուհետև համապատասխան բաժիններ է նվիրում Մեսրոպ Մաշտոցին, Ագաթանգեղոսին, Փավստոս Բուզանդին, Մովսես Խորենացուն, Եղիշեին, Ղազար Փարպեցուն: Տեղն է հիշելու Մովսես Խորենացուն նվիրված մենագրությունը, ուր ըստ արժանվույն և Խորենացուն արժանի մակարդակով բացահայտված է պատմահայրը իբրև գիտնական ու մտածող, գեղագետ ու քաղաքացի, իբրև իր ժամանակի «հասարակական մտքի ու գիտակցության և էսթետիկական ճաշակի ամենախոր կրողի»: Խորապես համոզիչ են ֆեոդալահոր հումանիզմի բնույթին, հայրենասիրությանը, քաղաքական հայացքներին ու գիտական մտածողությանը նվիրված էջերը: Առանձին արժեք են ներկայացնում Խորենացու օգտագործած գեղարվեստական հնարանքների նուրբ ու ճաշակավոր մեկնաբանությունները:



Իբրև առանձին շրջան, Մկրյանն առանձնացնում է նաև X դարը՝ վերջինիս հետ կապելով «հայկական Վերածնության» սկզբնավորումը: Վերլուծելով X դարի սոցիալ-քաղաքական հարաբերությունները, առևտրի ու քաղաքների բուռն զարգացումը, մարդկանց բարքերում ու գիտակցության մեջ կատարված արմատական վերափոխումները, Մկրյանը դարաշրջանի գլխավոր առանձնահատկությունները համարում է հակաֆեոդալական շարժումները: Հետևելով Էնգելսի հայտնի մտքին այն մասին, որ միջնադարում ֆեոդալիզմի դեմ ուղղված շարժումները կրոնական գունավորում են կրել, գիտնականը բացահայտում է մասնավորապես թոնդրակյան շարժման սոցիալական բովանդակությունը:

Գեղարվեստական գրականության մեջ նոր փուլի բնորոշ առանձնահատկությունը նամարելով քնարերգության սկզբնավորումը, գիտնականը հանգամանալից քննության է ենթարկում Նարեկացու տաղերն ու հանրահայտ «Մատյան ողբերգության» պոեմը: Ժամանակաշրջանի և հայկական վաղ վերածնության յուրահատկությունների համապատկերում Մկրյանը «մեծ կրոնավորի» ժառանգության մեջ տեսնում է իրական գեղեցկությունների փառաբանումը, մարդկային անսփ ողբերգության դրսևորումը իբրև վերածնության արտահայտություն, կատարյալ մարդու տենչը: Մկրյան-հետազոտողի արժանիքներից մեկն էլ այն է, որ ազգային արժանապատվության խոր ու զգաստ զգացումով վեր է հանում հայրենի գրականության մեծ ու ինքնատիպ արժեքները, բացահայտում նրանց ազգային ու համամարդկային նշանակու-

թյունը, համոզիչ զուգահեռներ անցկացնելով եվրոպական ու համաշխարհային գրականության մեծերի, գրական օրինաչափությունների հետ:

Մկրտիչ Մկրյանը լուրջ ներդրում է կատարել նոր շրջանի գրականության պատմության ուսումնասիրության բնագավառում: Այստեղ ևս նրա հետաքրքրությունները կենտրոնացել են այն գրողների ու գրական այնպիսի երևույթների վրա, որոնք զարգացման գլխավոր միտումների կրողներն են: Ում մասին էլ գրելիս լինի Մկրյանը, համոզիչ բացահայտում է ստեղծագործողի մտածողության ու գրելաձևի յուրահատկությունները, որոշում նրա տեղը գեղարվեստական զարգացման շղթայում: Երևույթների նորովի մեկնաբանման ձգտումն ու կարողությունը լավագույնս դրսևորվել է Խ. Աբովյանին ու Պ. Պռոշյանին, Րաֆֆուն ու Հովհ. Թումանյանին և մյուս խոշոր անհատականություններին նվիրված հետազոտություններում ու հոդվածներում: Մկրտչյանի սիրած եղանակներից մեկը ինքնության առարկա հեղինակին ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության համապատկերում քննելու միտումն է, որը հնարավորություն է տալիս հայ գրողի նմանությունը այլ ժողովուրդների հանրահայտ մեծություններին ու նրանց հետ ունեցած ընդհանրությունը զուգակցել համեմատվողի տաղանդի եզակիորեն ինքնատիպ յուրահատկությունների հայտնաբերմանը: Վերլուծության այս եղանակը դրսևորում է ստացել առաջին հերթին Հովհ. Թումանյանին նվիրված հոդվածներում և «Իսահակյանի հումանիզմը» հետազոտության մեջ: Գրականագիտական փայլով են գրված մասնավորապես վերջինիս «Սիրո պոեզիան» և «Կյանքի ծարավը» բաժինները, որոնք ինչ-որ տեղ դառնում են մեծ թեմայի մեկնաբանման՝ իրար լրացնող երկու մասեր: Իսահակյանի սիրո երգերին հավերժ մնայուն արժեք հաղորդող առանձնահատկություններից մեկը, ըստ գրականագետի, այն է, որ սիրո անցողիկության և սիրո ողբերգական տարերքի զգացողությունը ոչ միայն հուսահատության չի մղում ընթերցողին, այլև հակառակը, ընկալվում է իբրև կյանքի մեծ գեղեցկության, սիրո հավերժության փառաբանություն: Մյուս կարևոր առանձնահատկությունը, որ կրկին Մկրյանի հետազոտական աշխատանքի բնորոշ կողմերից է, մեծ անհատականությունների թվացող ու իրական հակասությունների մեջ անգամ մեծ անհատականության ներքին միասնության բացահայտումն է: Ահա թե ինչու Իսահակյանը կյանքի օրհներգու է ոչ միայն սիրո երգերում, «Ալագյազի մանիներում» ու «Սաղրի վերջին գարուն» արձակ բանաստեղծության մեջ, այլև «Աբու Լալա-Մահարի» հանրահայտ պոեմում: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ աշխարհի, իբրև անսկիզբ, անվերջ հուշքի ընկալումը այս պոեմի ընդհանրացումներից է, այլև հենց պոեմի ժխտական տարերքի շարժառիթների իմաստով: Մեծ ատելությունը ծնվում է մեծ սիրուց, ժխտման կիրքը՝ կատարյալի ու ներդաշնակի ձգտումից:

Անվանի գիտնականը բազմիցս անդրադարձել է ժողովրդական բանահյուսության խնդիրներին: «Սասունցի Դավիթ (հայ ժողովրդական մեծ էպոսը)» հետազոտությունը, ուր վեր են հանված «էպոսի գեղարվեստական մեծությունը պայմանավորած» առանձնահատկությունները՝ խոր ժողովրդայնությունը, կերպարների հարստությունն ու կատարելությունը, ինտերնացիոնալիստական պաթոսն ու համամարդկային մյուս բարձր գաղափարները, «բովանդակության արտակարգ հարստությունը», կառուցվածքն ու լեզվի պատկերավորությունը, էպոսագիտության լուրջ նվաճումներից է: Կրկին իրեն

հատուկ եղանակներով Մկրյանը հաստատում է, որ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը պատկանում է մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերի թվին» («Հայ հին գրականության պատմություն», էջ 335): «Սովսես Խորենացի» մենագրության ծավալուն գլուխներից մեկը նվիրված է պատմահոր «Հայոց պատմության» և ժողովրդական բանահյուսության առնչություններին, որտեղ ինքնության են առնվում ժողովրդական ստեղծագործության մասին Խորենացու հայացքները, բանահյուսությունից օգտվելու չափի ու կերպի հարցերը, «Հայոց պատմության» էջերում պահպանված հատվածների գեղարվեստական առանձնահատկությունները: Հին գրականության գեղարվեստական յուրահատկություններից մեկը իրավացիորեն համարելով ժողովրդական անգիր ստեղծագործությունների հետ անխզելի կապը, Մկրյան-հետազոտողը տևական հետաքրքրություն է ցուցաբերել այդ կապի հայտնաբերման ու իմաստավորման հանդեպ: Այս հետաքրքրությունը դրսևորվել է ոչ միայն պատմիչ-գրողներին, այլև Նարեկացուն, միջնադարյան տաղերգուներին և նոր գրականության խոշորագույն ներկայացուցիչներին նվիրված ուսումնասիրություններում: Բացի այն, որ իր գրականագիտական աշխատություններում գիտնականն անդրադարձել է հայ ժողովրդի պատմության կենսոտ հարցերին, նա հատուկ մի հետազոտություն է նվիրել հայ ժողովրդի կազմավորման խնդրին («Հայ ժողովրդի կազմավորումը Հայկական լեռնաշխարհում»), որի մեջ, հայտնի փաստերի նորովի մեկնաբանմամբ և հենվելով լեզվաբանական նորագույն ուսումնասիրություններին, պաշտպանում է այն թեզը, որ հայ ժողովրդի և հայոց լեզվի կազմավորման մեջ բիայնացիները նույնպես վճռական մասնակցություն են ունեցել:

Մ. Աբեղյանի և Ա. Տերտերյանի ավանդներով դաստիարակված, նրանց ավանդները ստեղծագործաբար զարգացնող գիտնականը իր ուսուցիչների նման նաև վաստակավոր մանկավարժ է, երիտասարդության, գիտնականների մի շարք սերունդների դաստիարակ: 1933 թ. անընդմեջ դասախոսելով Երևանի պետական համալսարանում (երկար տարիներ նաև այլ բուհերում), նա տասնյակ սերունդներ է նամփել դեպի կյանք՝ հաղորդելով նրանց հարուստ գիտելիքներ, սերմանելով նրանց մեջ սեր ու հաշակ դեպի գրականությունն ու գեղեցիկը: Մեծ է Մկրյան-դասախոսի հմայքը: Նրա դասախոսություններին բոլորն են սպասում անհամբերությամբ: Ոչ մի վերամբարձ արտահայտություն. հասարակ, սովորական բառեր են, որոնք հենց սկզբից հասկանում են ունկնդրին, հասնում մտքին ու սրտին: Պրոֆեսորը բացում է գրական գեղեցկությունների անանց արժեքը, գեղարվեստական զարգացման օրինաչափությունները:

Նշանակալի են պրոֆ. Մկրյանի՝ դպրոցին մատուցած ծառայությունները: Արդեն քանի տարի անընդմեջ հրատարակվում է հայ գրականության պատմության նրա դասագիրքը, լավագույններից մեկը հանրապետությունում: Գրական մանկավարժական գործունեությունը Մկրյանն սկսել է դպրոցի համար քրեստոմատիաներ կազմելով, ըստ որում՝ առաջին քրեստոմատիան կազմել է 1930-ական թթ. սկզբներին, պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Ե. Չարենցի հանձնարարությամբ: Արդեն Չարենցի վստահությունը տակավին երիտասարդ և համբավ չունեցող մարդու հանդեպ ինքնին շատ խոսուն փաստ է: Հիշենք, որ գիտնականը գրականության պատմության դասագիրք է գրել սփյուռքահայ դպրոցների համար ևս: Ահա թե ինչու արժա-

ճիորեն նրա կուրծքը զարդարում է ժողովրդական կրթության ասպարեզում վաստակավորի համար սահմանված Խ. Աբովյանի մեդալը:

Անուրանալի է պրոֆ. Մկրյանի երախտիքը գիտական կադրերի սահեցման ասպարեզում ևս: Նրա բազմաթիվ ասպիրանտները մանկավարժական ու գիտական աշխատանք են կատարում ինչպես համալսարանում, այնպես էլ հանրապետության այլ բուհերում ու գիտահետազոտական հիմնարկներում:

Կյանքի և աշխատանքի մեծ հանապարհ է անցել Մ. Մկրյանը: Ծնվել է Վանում 1908 թ., բազմակողմանիորեն զարգացած ու առաջադեմ ուսուցիչ Մամբրե Մկրյանի ընտանիքում: Ապագա գիտնականի առաջին ուսուցիչներից մեկը եղել է հայտնի երգիծաբան Լեո Կամսարը: Սակայն Մկրյանների ընտանիքը ևս կիսում է 1915-ին արևմտահայերին վիճակված ծանր փորձությունները: Վան, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, Երևան՝ ահա պանդուխտ ընտանիքի երթուղին: Երևանում էլ Մկրյանը ավարտում է դպրոցը, ընդունվում համալսարան, որն ավարտելուց անմիջապես հետո նրան պահում են ասպիրանտուրայում: 1933 թ. մինչև օրս նա դասավանդում է համալսարանում, կյանք է ճամփում սերունդներ, ստեղծում գիտական արժեքավոր գործեր: Արտաքին խստության տակ թաքցնում է մեծ ու անապ մի սեր դեպի ուսանողությունը, դեպի երիտասարդությունը:

Անուրանալի է պրոֆ. Մ. Մկրյանի հասարակական-վարչական գործունեությունը: Շուրջ քսանհինգ տարի նա գլխավորում է հայ նոր գրականության ամբիոնը, տարբեր տարիների, երկարատև ժամկետներով, եղել է բանասիրական ֆակուլտետի դեկան, ղեկավարել է ԳԱ գրականության ինստիտուտը:

Հայագիտության երախտավորը նույն ավյունով շարունակում է գիտամանկավարժական գործունեությունը: Այսօր էլ նրա դասախոսություններին սպասում են անհամբերությամբ, այսօր էլ նա լսարանը շիկացնում է այս կամ այն գրողի ստեղծագործության գեղեցկությունների անպանույշ բացահայտումներով, համաշխարհային գրականության նմուշների հետ բացառիկ ճաշակով արվող համեմատություններով, գեղարվեստական զարգացման օրինաչափությունների հստակ մեկնություններով:

Գ. ԱՆԱՆՅԱՆ